Հրանտ Մաթևոսյան

Գնալու և հասնելու ճանապարհը

Մարդկային մեծագույն առաքինությունը սեփական չկամությունը կոտրելու կարողությունն է: Կարելի է խենթանալ ու հերոսանալ, կարելի է հերոսանալ թշնամու արատի ստույգ հաշվարկով, կարելի է սեփական հասակը բարձրացնել թշնամական հասակի ուրացումով. և այդ է պահանջում հաղթական պայքարի օրենքը, բայց մեծագույն առաքինություն է մնում սեփական չկամությունը ջարդելու բարձր կարողությունը:
Եվ մեր ամենքից ու յուրաքանչյուրից այսօր անհնարին ջանք է պահանջվում՝ հեռացնել, վոնդել մեզնից յուրաքանչյուրից այդ չկամությունը: Անհնարին եմ ասում, որովհետև դա սեփական կամքի ջախջախում է թվում, գրեթե ինքնաոչնչացում: Այնինչ դա է մեծարելու և մեծանալու, մեծարելով մեծանալու ճանապարհը, բարձրացնելու և բարձրանալու, փրկելու և փրկվելու, գնալու և հասնելու ճանապարհը, որովհետև «ինչ մտանես՝ էն գտանես - ինչ մտանեմք՝ այն գտանեմք». այսօր «ճիվաղ» մտանեմ՝ վաղը ինձնից իսկ սերված ճիվաղը կանգնելու է իմ ճանապարհին, այսօր «ընկեր ու եղբայր» մտանեմ՝ վաղվա օրով հայտնվելու եմ եղբայրներիս ու ընկերներիս բանակում:
Ամենադժվարն իսկապես սեփական ճճվին սեփական հոգում ճզմելն է և ամենահեշտն իսկապես՝ ուրիշների անուրանալին ուրանալու կարողությունը, որոնց մեղքը այն է միայն, որ նրանք դու չես, նրանք մեզնից են՝ բայց մենք չեն, ինձնից են՝ բայց ես չեմ:
Ուրացումի, ժխտումի, քանդումի դիվական ճանապարհը սկիզբ է առնում մեր հոգիներից, և մեր բերանները, որ կարող էին լույս խփել, լույս հորդալ,- սկիզբն են լինում ավարի ու ավերի հմայող ճանապարհի: Մեր երկար օրվա մայրամուտին այդ ճանապարհը մի բանի մեզ ստուգապես հասցնում է, և այդ

բանը ժխտողի և ավերակողի մեր իսկ պատվանդանն է, բայց երբեք բարեշեն այն օջախը, որ երկիր ու հայրենիք էր կոչվելու և լինելու էր ամենքինս: Այդ ճանապարհի ավարտը մեր իսկ վերջն է, և ուզում ենք երկարի այդ ճանապարհը, և ուզում ենք անվերջ լինի, որովհետև վերջը մեր իսկ վերջն է, որովհետև երեկվա օրով ոչ ոք էինք, այսօր մի ոմն ենք:

Ատելության, ժխտման ու ավերակման ուղին սկիզբ է առնում մեր հոգիներից, այս սերնդին այնինչ, մեր որդիների ու եղբայրների ողբերգական սերնդին, այս խաբվող, ընկնող, ընկրկող, ելնող ու նորեն խրոխտացող սերնդին մենք պարտավոր ենք միայն օրհնել ու բարի երթ մաղթել - որովհետև մեր հազարամյա պատմության մեջ թերևս առաջին անգամ այս սերունդն է ստեղծված մեր մսից ու արյունից ու մեր օրերից և իրեն էր վիճակված անել մեր սխալները, սայթաքել մեր փոխարեն, կանգնել մեր տեղը պատմության առջև և իր վրա առնել մեր բաժին նզովքը սերունդներից ու սերունդներից՝ եթե նզովքի ենք արժանի:

Պատմությունը ազգերի ու ժողովուրդների ճանապարհին նստած սֆինքս է՝ որ անցած ուղիներիդ դասը չի հարցնում - փորձում է իրենից՝ այսօրից անցնելու, գալիքին ոտք դնելու կամքդ:

Տեղներս, այո, դժվար է: Ոչ մի անգամ, ուրիշ ոչ մի անգամ ծանր կացությունն այսպես սֆինքսորեն մեր դռանը չի չոքել. եթե ինքնիշխանության դրոշ պարզել ենք՝ ապա և անձնատրության սպիտակ դրոշը մեր ծոցում պատրաստ բռնած. եթե ընդվզել ենք՝ այլազգի մեր տիրոջ գահն ի վեր. եթե գաղթեցրել են՝ խոնարհ հպատակության են քշել և ոչ հողմացրիվության: Հիմա՝ մեր անձնատուր հպատակությունը չեն ուզում - պահանջում են մեր չլինելը: Կամ եղիր, կամ մի: Կամ-կամ:

Եվ սա պահանջվում է մի սերնդից, որ սերունդների մեր հազարամյա երթի մեջ ամենաքիչն էր պատրաստ կանգնել նման պահանջի առջև,- - կարծում էր կա և հաղթանակած ազգերի բանակում կա մեկընդմիշտ: Իսկ մեկընդմիշտ հաղթանակներ չեն լինում - ամեն մի սերունդ պարտավոր է զարդարվել իր հաղթանակով:

Լինելության կոիվ է պահանջվում մի սերնդից, որ ստիպված է երես առ երես մենակ նստել դիվանագիտության քոքված գայլերի դեմ. մենակ կանգնել ռազմի արհեստում հմտացած մսագործների առաջ. հարաբերվել առևտուր անուն մի գործի, ուր խաբելը հաղթանակ և խաբվելը անբարո է. նորից սովորել հողի հին

լեզուն և զրուցել արտի ու այգու հետ, որպես թե կուռքդ եզը չի եղել և ծիրանի ծառը քույրդ չի եղել. անկման ու փախուստի ճանապարհին կանգ առնել ո՛չ դատախազի կանչի վրա - սեփական խղճի. հաղթահարել բռնության, կողոպուտի, անիշխանության, շնության ստրկական ազատությունը և իրեն զսպել բարոյականության կապանքով:
Այս խաբվող, ընկնող, ընկրկող, ելնող ու նորեն խրոխտացող սերնդին՝ մեր որդիների ու եղբայրների ողբերգորեն հերոսական սերնդին, մեզ առաջնորդ չանելու իրավունքը մենք չունենք, իր մեծ երթի թափը մեզնով չզորացնելու իրավունքը մենք չունենք, իրեն առաջնորդողին մեզ առաջնորդող չհամարելու բարոյական իրավունքը մենք չունենք:
«Հայաստանի Հանրապետություն», 19.09.1996թ.